

պտղի. եւ ասոնց տեղ գանձանակներ ու ինքնաբերական նուէրներ կան հիմայ:

Պոլսի Պատրիարքութիւնը, ուրեմն, Հայ. Եկեղեցւոյ կառավարութեան մէջ մեծ փոփոխութեան մը պատճառ եղաւ եւ այս փոփոխութիւնը կարծեմք թէ շատ ալ օգտակար եղաւ: Որովհետեւ Պոլիս՝ Թուրք տիրապետութեան տակ մտնելով, Ֆաթիհի խելացի կարգադրութեամբ կենդրոն մը եղաւ գործունեայ Հայերուն ալ: Պոլիս իր աշխարհագրական բացարձակապէս միակ դիրքովը, թող քաղաքականը, տնտեսագիտական կռուան մը պիտի ըլլար Եւրոպիոյ եւ Ասիոյ փոխադարձ արտածութիւններուն ու ներածութիւններուն: Եւ այս իսկ պատճառաւ վաճառական Հայեր, որոնց համար ծով ու ցամաք նշանակութիւն չունէր, կանուխէն սկսած էին Վոսփորի ափերը չափել: Զուղայեցիք, որ Հայ վաճառականութեան տարածումը եւ յաջողութիւնը Ասպահան եւ անկից ալ Հնդկաստան, Վենետիկ տարին փայլեցուցին, Սեւ ծովը չէին կրնար զգնահատել: Քէֆէն (Կաֆայ)՝ գրաւեցին վաճառականական յաջողութիւններով: Իսկ Քէֆէ՝ Պոլսի առումէն ալ յառաջ՝ իր վաճառականները հաստատած էր Պոլսի առեւտրական մեծ արուարձանը, Ղալաթիան. ուր նշանաւոր եղան Քէֆէցի Հայ վաճառականներ, ինչպէս իրենց նաւերով ու ապրանքներով, նոյնպէս իրենց եկեղեցիներով: Պոլիս հիմայ՝ իր Ղալաթիոյ Ս. Լուսաւորիչ եկեղեցին Քէֆէցի Հայ վաճառականներուն կը պարտի:

Պոլիս, անշուշտ, իր բոլոր յարմարութիւններով իրեն պիտի քաշէր հայը ամէն կողմերէ: Երբ մէկ կողմէն արդէն սկսած էին Հայք հաստատուիլ Պոլսի մէջ եւ երբ միւս կողմէն Ֆաթիհ կը քաջալերէր Հայերը եւ Պոլսի մէջ նոր գաղութներ կը հաստատէր եւ իրենց կու տար Պատրիարք մըն ալ, մնացածը դիւրին էր այլ եւս: Քիչ առենէն Պոլիս իր առեւտրական եւ սեղանաւորական ամէնէն կա-